ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՂԱԶԱՆՉԻԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

« 30 » սեպտեմբերի 2016թ. գ. Ղազանչի

№ 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

Հ.ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սիմոնյան

Կից ներկայացվում են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչիի համայնքի ավագանու 2016 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 14-Ն, 15 և 16-Ա որոշումները:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

Ղազանչիի համայնքի ղեկավար՝ *Մ.Ղազարյան*

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹՂԹԱԿԱՆ
Մուտք թիվ 9796-16
30 09 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՂԱԶԱՆՉԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14 -Ն

գ. Ղազանչի

27 Սեպտեմբեր2016 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11 -Ի ԹՐՎ 1<< ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը

Համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 11-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

<<Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում>> ծրագրի << Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> հոդված 4111<<7945.1 հազար դրամ>>թիվը փոխարինել <<7523,1հազար դրամ>>թվով:
<<Պարգևատրումներ,դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>>հոդված 4112 <<186,2 հազար դրամ>>թիվը փոխարինել <<608,2 հազար դրամ>>թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Արթուր Կարապետյան՝ կողմ
Էմին Բդոյան՝ կողմ
Մեխակ մխիթարյան՝ կողմ

Ղազանչի համայնքի ղեկավար Ս.Ղազարյան

27 սեպտեմբեր 2016 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15
27 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2016 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <<ԱԽՈՒՐՅԱՆԻ ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ>> ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱԿՑԵԼԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 79-րդ հոդվածի, <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքուի 2-րդ և 9.7 հավելվածների դրույթներով:

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքուի 2-րդ և9.7 հավելվածներում Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից 27 Հունիսի 2016թվականի կատարած փոխություններն ու լրացումները.

Համայնքի ավագանին որոշում է

2016թվականի հոկտեմբերի 1-ից դադարեցնել Ղազանչի համայնքի անդամակցությունը Ախուրյանի Միջհամայնքային Միավորում Իրավաբանական Անձանց Միությանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
Արթուր Կարապետյան՝ կողմ
Էմին Բդոյան՝ կողմ
Մեխակ Մխիթարյան՝ կողմ

Համայնքի ղեկավար՝ Ս.Ղազարյան

27 սեպտեմբեր 2016
գ.Ղազանչի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 16-Ա

« 27 » սեպտեմբերի 2016 թվական գյուղ Ղազանչի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՆՉԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍԿ5 ՄԱԿՆԻՇԻ ԵՐԿՈՒ ԿՈՄԲԱՅՆՆԵՐԸ, Տ-150 ԱՆԻՎԱՎՈՐ ՏՐԱԿՏՈՐԸ, ՄՄԶ-4502 ՄԱԿՆԻՇԻ ԲԵՌՆԱՏԱՐ ՄԵՔԵՆԱՆ ԵՎ ՌԺԿ-8 ՄԱԿՆԻՇԻ ԳՈՄԱՂԲԱՀԵՂՈՒԿ ՏԵՂԱՓՈԽՈՂ ԿՑՈՐԴԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ, ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ «ՂԱԶԱՆՉԻԻ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նորաստեղծ «Ղազանչիի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի մեքենատրակտորային պարկը համալրելու և համայնքի գյուղացիական տնտեսություններին մատուցվող հողերի մշակության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի, նույն հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 594-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ղազանչի համայնքի սեփականությունը հանդիսացող ՍԿ5 մակնիշի երկու կոմբայնները, Տ-150 անիվավոր տրակտորը, ՄՄԶ-4502 մակնիշի բեռնատար մեքենան և ՌԺԿ-8 մակնիշի գոմաղբահեղուկ տեղափոխող կցորդը անհատույց, սեփականության իրավունքով տրամադրել «Ղազանչիի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին:
2. Ղազանչի համայնքի ղեկավար Սամվել Ղազարյանին՝
Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «Ղազանչիի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվի հետ կնքել գույքի հանձնման պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 3 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ԷՄԻՆ ԲԴՈՅԱՆ՝ կողմ
ՄԵԽԱԿ ՄԽԻԹԱՐՅԱՆ՝ կողմ
ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ՝ կողմ

Ղազանչիի համայնքի ղեկավար՝ *Ս.Ղազարյան*

« 27 » սեպտեմբերի 2016 թվական
գ. Ղազանչի